

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2015 թ.

N 917-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել պետական անտառների հավատարմագրային կառավարման մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է պետական անտառների հավատարմագրային կառավարման հանձնելու նպատակով մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգը:

2. Անտառները հավատարմագրային կառավարման են հանձնվում անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքին, սույն կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Անտառները հավատարմագրային կառավարման են հանձնվում անտառների կառավարումն իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի կողմից (այսուհետ՝ լիազորված մարմին) սույն կարգին համապատասխան կազմակերպված մրցույթի արդյունքների հիման վրա:

4. Յուրաքանչյուր տարի այն կազմակերպության կողմից, որին ամրացված են պետական անտառները, անտառները հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ առաջարկն ու անտառների կառավարման (ներառյալ՝ ֆինանսական) ծրագիրը ստանալիս լիազորված մարմինն ուսումնասիրում է այն և հաստատում հաջորդ տարվա ընթացքում հավատարմագրային կառավարման հանձնման ենթակա անտառների ցանկը՝ այն հրապարակելով զանգվածային լրատվության միջոցներով և լիազոր մարմնի www.mnp.nkr.am պաշտոնական ինտերնետային կայքում:

5. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ անձինք):

6. Մրցույթին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնց հետ սույն կարգին համապատասխան կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրերը վերջին հինգ տարվա ընթացքում դադարեցվել են վերջիններիս կողմից՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պատճառով:

II. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

7. Հավատարմագրային կառավարման հանձնման ենթակա անտառների ցանկը հաստատելուց հետո, լիազորված մարմինն այդ անտառների հավատարմագրային կառավարման հանձնման մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով, տասնօրյա ժամկետում ստեղծում է առնվազն ինն անդամից կազմված մրցութային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակական և (կամ) գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

8. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է լիազորված մարմնի կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան՝ նիստեր հրավիրելու միջոցով, որոնք

իրավազոր են, եթե վերջինիս մասնակցում են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի քարտուղարը:

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը, կազմում արձանագրություններ:

2) ապահովում է արձանագրությունների և մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող բոլոր փաստաթղթերի հավաքագրումը, փաթեթի կազմումը և մրցույթի ավարտից հետո հանձնում լիազորված մարմնին:

3) կատարում է սույն կարգից բխող հանձնաժողովի նախագահի կողմից իրեն տրված հանձնարարականները:

11. Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները:

12. Մրցույթի արդյունավետ իրականացման նպատակով մրցույթը նախապատրաստելու և կազմակերպելու համար հանձնաժողովը կարող է իր աշխատանքներում խորհրդակցական ձայնի իրավունքով ընդգրկել համապատասխան մասնագետների:

13. Հանձնաժողովի աշխատանքները համարվում են ավարտված մրցույթի վերջնական արդյունքներն ամփոփելուց և արձանագրությունը լիազորված մարմնին հանձնելուց հետո:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Մրցույթի անցկացման ծանուցումը (հրավերը) պետք է հրապարակվի մրցույթի հայտերի ընդունման վերջին օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:

15. Մրցույթի անցկացման ծանուցումը (հրավերը) պետք է պարունակի տեղեկություններ՝

1) մրցույթի կազմակերպիչի անվանման, մրցույթի կազմակերպման վայրի (հասցե):

2) մրցույթի մասնակցության հայտերի ընդունման ժամանակահատվածի՝ նշելով ժամերն ըստ օրերի, ընդ որում, հայտերի ընդունման վերջին ժամկետը պետք է սահմանվի մրցույթի անցկացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

3) հավատարմագրային կառավարման հանձնվող գույքի նկարագրի:

4) հավատարմագրային կառավարման ժամկետի:

5) մասնակիցների կողմից գույքին ծանոթանալու օրերի և ժամերի:

6) մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջների, այդ թվում՝ անտառային ոլորտի մասնագետների առկայության:

7) անտառի կառավարման ծրագրին ներկայացվող պահանջների:

8) մրցույթի մասնակցության հայտին կից պահանջվող փաստաթղթերի ցանկի:

9) մրցույթի պայմանների, դրանց գնահատման կշռային գործակիցների և մրցույթի հաղթողին որոշելու:

10) մրցույթի մասնակցության վճարի չափի և դրա վճարման կարգի ու ժամկետների:

11) մրցույթի հայտերի բացման և դրանց ամփոփման նիստերի օրերի ու ժամերի:

12) հավատարմագրային կառավարչի վարձատրության չափի և հավատարմագրային կառավարման պայմանագրի կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման:

13) հավատարմագրային կառավարման պայմանագրին և կառավարման պլանին ծանոթանալու և դրանց պատճեններն ստանալու մասին:

14) հանձնաժողովի որոշմամբ՝ այլ տեղեկություններ:

16. Մրցույթի մասնակցության հայտին կից ներկայացվում են՝

1) անտառի կառավարման ծրագիրը:

2) վճարի մուծումը հավաստող փաստաթղթի պատճենը:

3) կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը, գտնվելու և գործունեության վայրը:

4) անհատ ձեռնարկատերերի համար՝ հասցեն, անձնագրի և պետական գրանցման վկայականի պատճենները.

5) հայտատուի կողմից տրված լիազորագիրը, եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը.

6) ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:

17. Մրցույթի մասնակցության հայտերը, անտառի կառավարման ծրագիրը, անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին, ծանուցման (հրավերի) մեջ նշված հայտերի ընդունման ժամկետում, ներկայացվում են սուսնձված և ստորագրված ծրարով անձամբ կամ փոստով:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԳՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

18. Մրցույթի հայտատուները ծանուցմամբ (հրավերով) սահմանված կարգով, չափով ու ժամկետներում մուծում են մրցույթի մասնակցության վճարը՝ լիազորված մարմնի կողմից այդ նպատակով բացված դրամային հաշվին:

19. Հայտի (ծրարի) ներկայացման ժամկետը համարվում է հանձնաժողովի կողմից այն ստանալու օրը և ժամը, որի մասին կատարվում է գրառում ծրարի վրա:

20. Սույն կարգով սահմանված ժամկետների խախտումով ներկայացված հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտը ներկայացնողին:

21. Հայտատուները մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի լրանալը կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը:

22. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտի փոփոխության կամ վերադարձման մասին դիմումները մերժվում են:

23. Մրցույթի հայտը գրանցվում է գրանցամատյանում հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտն ընդունելու մասին:

24. Մրցույթի մասնակցության համար միայն մեկ հայտ ներկայացնելը հիմք չի հանդիսանում մրցույթը չկայացած համարելու համար:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

25. Մրցույթի մասնակցության հայտերը բացվում են մրցույթի անցկացման մասին ծանուցմամբ (հրավերով) սահմանված օրը և ժամին, որին մասնակցում են բոլոր հայտատուները, և հրապարակվում են՝

1) յուրաքանչյուր հայտատուի անունը, ազգանունը (անվանումը).

2) մրցույթի մասնակցության հայտերի համապատասխանությունը ծանուցմամբ (հրավերով) մրցույթի համար սահմանված պայմաններին:

26. Հայտերը, որոնք չեն համապատասխանում մրցույթի համար սահմանված պայմաններին, հանձնաժողովի կողմից մերժվում են, և հանձնաժողովը դրա մասին եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է հայտատուներին: Հանձնաժողովի մերժման մասին որոշումը կարող է հայտատուի կողմից բողոքարկվել՝ վերադասության կամ դատական կարգով:

27. Հանձնաժողովի անդամները ներկայացված առաջարկությունների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով իրավունք ունեն դիմելու մրցույթի մասնակիցներին կամ նրանց լիազորված ներկայացուցիչներին:

28. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն ստացել է լիազորված մարմնի կողմից սահմանված գնահատման կշռային գործակիցների ամենաբարձր հանրագումարը:

29. Գնահատման կշռային գործակիցների հավասար հանրագումար ստանալու դեպքում հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

30. Հանձնաժողովը մրցույթի արդյունքների ամփոփման օրը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն և այն եռօրյա ժամկետում ներկայացնում լիազորված մարմին:

31. Հաղթողի կողմից պայմանագիր կնքելուց խուսափելու կամ հրաժարվելու դեպքում մրցույթի հաղթող է ճանաչվում գնահատման արդյունքում երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցը, իսկ այդպիսին չլինելու դեպքում մրցույթը համարվում է չկայացած:

32. Մրցույթին մասնակցելու վճարի չափը, մուծման ժամկետները սահմանում է մրցութային հանձնաժողովը: Մրցույթին մասնակցելու վճարի չափը վերադարձման ենթակա չէ:

33. Մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1) մրցույթի մասնակցության համար ոչ մի հայտ չի ներկայացվել:

2) սույն կարգով և օրենքով նախատեսված այլ դեպքերում:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Մրցույթի արձանագրությունն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում լիազորված մարմինն ապահովում է մրցույթի հաղթողի հետ հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքումը, որն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

35. Պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվում են մրցույթի հաղթողի միջոցների հաշվին:

36. Մրցույթն անվավեր կարող է ճանաչվել դատական կարգով:

37. Դատական կարգով մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անվավերության:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ